


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2016 թվականի հոկտեմբերին


(վերլուծություն)

2016 թվականի հոկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 14787 գործարք, որոնց քանակը 2016 թվականի սեպտեմբեր ամսվա համեմատ աճել է 3.7 %-ով, իսկ 2015 թվականի հոկտեմբերի համեմատ՝ նվազել 7.9 %-ով:

2016 թվականի հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4104 օտարման գործարքի 72.6 %-ը կազմել է առուվաճառքը, 26.8 %-ը՝ նվիրատվությունը և 0.6 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 39.4 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 40.2 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2016 թվականի հոկտեմբերին, 2016 թվականի սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքներն աճել է 1.6 %-ով, իսկ 2015 թվականի հոկտեմբերի համեմատ՝ նվազել 14.5 %-ով:

2016 թվականի հոկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 69.5 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2016 թվականի հոկտեմբերին, 2016 թվականի սեպտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 17.9 %-ով, իսկ 2015 թվականի հոկտեմբերի համեմատ՝ նվազել 10.0 %-ով:

2016 թվականի հոկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	հոկտեմբեր 2015 թ.	հոկտեմբեր 2016 թ.	սեպտեմբեր 2016 թ.
Կենտրոն	428000	428250	428250
Արաբկիր	356700	357350	357350
Քանաքեռ-Զեյթուն	282800	283250	283150
Նոր Նորք	253500	254400	254300
Ավան	260950	261900	261800
Էրեբունի	252200	252500	252350
Շենգավիթ	257350	257900	257750
Դավթաշեն	276200	277000	276900
Աջափնյակ	250350	251200	251100
Մալաթիա-Սեբաստիա	243500	244200	244200
Նուբարաշեն	156900	157600	157500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հոկտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի սեպտեմբերի համեմատ՝ աճել է 0.02%-ով:

2016 թվականի հոկտեմբերին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 352 բնակարան, որոնց քանակը 2016 թվականի սեպտեմբերի համեմատ աճել է 11.4 %-ով, իսկ 2015 թվականի հոկտեմբերի համեմատ՝ նվազել 10.7 %-ով:

2016 թվականի հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		հոկտեմբեր 2015 թ.	հոկտեմբեր 2016 թ.	սեպտեմբեր 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	116200	116050
	Ապարան	58000	58800	58600
	Թալին	66300	66900	66850

Արարատ	Արտաշատ	98100	99050	98950
	Մասիս	115800	115800	115800
	Վեդի	101500	101750	101750
	Արարատ	77000	77650	77550
Արմավիր	Վաղարշապատ	154100	154200	154200
	Արմավիր	121200	121250	121250
	Մեծամոր	87550	87600	87600
Գեղարքունիք	Սևան	99400	99400	99400
	Գավառ	60250	60700	60650
	Մարտունի	107700	107700	107700
	Վարդենիս	45000	45400	45300
	Ճամբարակ	28750	28800	28800
Լոռի	Վանաձոր	88500	88600	88600
	Ստեփանավան	74600	74900	74750
	Սպիտակ	99800	99950	99850
	Ալավերդի	55400	55950	55900
	Տաշիր	47350	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20500	20500	20500
Կոտայք	Աբովյան	155100	155150	155150
	Նոր Հաճն	128550	128550	128550
	Բյուրեղավան	108200	108250	108250
	Եղվարդ	109400	109950	109900
	Հրազդան	63800	63900	63900
	Ծաղկաձոր	292400	292400	292400
	Չարենցավան	85500	85500	85500
Շիրակ	Գյումրի	109250	109450	109450
	Արթիկ	66850	67400	67400
	Մարալիկ	40850	41150	41150
Սյունիք	Գորիս	123100	124000	123950
	Կապան	94200	95600	95450
	Սիսիան	92000	92400	92200
	Մեղրի	82400	83500	83300
	Ագարակ	47300	47800	47750
	Քաջարան	94650	95000	94950
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	95100	95100
	Եղեգնաձոր	125700	126450	126350
	Ջերմուկ	112950	113300	113300
Տավուշ	Դիլիջան	115100	115700	115600
	Իջևան	118450	118600	118550
	Բերդ	60300	60550	60450
	Նոյեմբերյան	50150	50500	50400
	Այրում	31850	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի սեպտեմբերի համեմատ՝ մնացել է անփոփոխ:

2016 թվականի հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 376 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 109 գործարք, մարզերում՝ 267 գործարք: 2016 թվականի հոկտեմբերին, 2016 թվականի սեպտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 0.8 %-ով, ընդ որում, Երևանում՝

0.9 %-ով, իսկ մարզերում՝ 0.7 %-ով: 2016 թվականի հոկտեմբերին 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 0.8 %-ով, ընդ որում, Երևանում՝ նվազել 14.2 %-ով, իսկ մարզերում՝ աճել 8.5 %-ով:

2016 թվականի հոկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	հոկտեմբեր 2015 թ.	հոկտեմբեր 2016 թ.	սեպտեմբեր 2016 թ.
Կենտրոն	476100	476350	476350
Արաբկիր	383000	383200	383200
Քանաքեռ-Զեյթուն	295000	295200	295000
Նորք-Մարաշ	319200	319450	319300
Ավան	270500	270750	270600
Էրեբունի	239750	239900	239750
Շենգավիթ	255000	255150	255000
Դավթաշեն	276000	276200	276100
Աջափնյակ	250050	250200	250100
Մալաթիա-Սեբաստիա	238000	238150	238100
Նուբարաշեն	150800	150800	150800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հոկտեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի սեպտեմբերի համեմատ՝ աճել է 0.02%-ով:

2016 թվականի հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		հոկտեմբեր 2015 թ.	հոկտեմբեր 2016 թ.	սեպտեմբեր 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136250	136250
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100100	100100
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153150	153150
	Արմավիր	107000	107000	107000

Գեղարքունիք	Սևան	94950	94950	94950
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96200	96200
	Վարդենիս	41100	41150	41150
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100750	100900	100900
	Ստեփանավան	91000	91200	91200
	Սպիտակ	114000	114050	114050
	Ալավերդի	50200	50300	50300
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
Կոտայք	Աբովյան	157300	157350	157350
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	119250	119350	119350
	Արթիկ	63250	63450	63450
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130050	130050
	Կապան	100650	100750	100750
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84600	84650	84650
	Ագարակ	46900	46950	46950
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90150	90150	90150
	Եղեգնաձոր	116750	116750	116750
	Ջերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	115300	115750	115750
	Իջևան	123200	123250	123250
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի սեպտեմբերի համեմատ՝ մնացել է անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի հոկտեմբերին հանրապետությունում օտարվել է 1349 միավոր (662.39 հա) հող, որից Երևանում՝ 78 միավոր (5.96 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 795 միավոր (605.93 հա), որից Երևանում՝ 3 միավոր (0.58 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 375 միավոր (29.19 հա), որից Երևանում՝ 48 միավոր (1.74 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 137 միավոր (12.54 հա), որից Երևանում՝ 25 միավոր (1.04 հա),

- արդյունաբերական օբյեկտների հող՝ 20 միավոր (10.39 հա), որից Երևանում՝ 2 միավոր (2.59 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 8 միավոր (2.68 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 14 միավոր (1.66 հա) ընդհանուր մակերեսով:

2016 թվականի հոկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1081 միավորի (503.07 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 66 միավոր (5.08 հա), նվիրատվության գործարք՝ 260 միավորի (158.79 հա), որից Երևանում՝ 8 միավոր (0.65 հա) և փոխանակության գործարք՝ 8 միավորի (0.53 հա), որից Երևանում՝ 4 միավոր (0.23 հա):

Հանրապետությունում 2016 թվականի հոկտեմբերին, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 18.1 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 20.5 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 13.0 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 58.3 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Կոտայքի մարզում՝ 99.26 հա, որից 92.23 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 26.5 %-ը կամ 287 միավորը (122.14 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 25 միավոր (0.44 հա), իսկ 72.9 %-ը կամ 788 միավորը (379.08 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 41 միավոր (4.65 հա): 2016 թվականի հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել է կառուցապատման իրավունքի վաճառքի 6 գործարք /1.86 հա/:

Ստորև ներկայացված է 2016 թվականի հոկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					Բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						Բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	0	0.00	13	0.13	12	0.30	1	0.03	2	2.59	30	1.42	8	0.60
Արագածոտն	14	22.84	0	0.00	1	0.04	7	0.36	45	37.97	0	0.00	15	3.04	1	0.01
Արարատ	10	5.16	1	0.01	16	0.63	2	0.03	94	52.65	1	3.80	37	3.39	8	0.07
Արմավիր	3	10.82	1	0.09	0	0.00	2	0.03	80	78.92	0	0.00	39	4.16	2	0.01
Գեղարքունիք	1	0.04	0	0.00	4	0.09	10	0.52	13	19.84	0	0.00	24	2.51	5	0.35
Լոռի	2	6.00	4	0.47	9	0.03	5	0.02	67	52.29	1	0.21	4	0.23	6	4.30
Կոտայք	22	42.12	0	0.00	35	0.81	16	0.35	119	50.10	0	0.00	51	4.25	5	1.24
Շիրակ	2	2.75	0	0.00	5	0.19	1	0.01	31	22.46	1	0.07	5	0.22	1	0.15
Սյունիք	4	1.63	2	1.01	1	0.002	0	0.00	33	21.58	0	0.00	14	0.88	4	0.05

Վայոց ձոր	39	20.73	0	0.00	1	0.18	5	0.07	19	4.64	0	0.00	2	0.35	0	0.00
Տավուշ	11	2.20	3	0.90	5	0.10	7	0.29	6	3.33	2	0.32	2	0.20	4	0.44
Ընդամենը	108	114.29	11	2.48	90	2.20	67	1.98	508	343.81	7	6.99	223	20.65	44	7.22

Ստորև ներկայացված է 2016 թվականի հոկտեմբերին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	14	0.09	0	0.00	10	0.06	4	0.03	11	0.35	0	0.00	0	0.00	3	0.07	8	0.28
Արագածոտն	2	0.12	0	0.00	1	0.04	1	0.08	20	23.12	14	22.84	0	0.00	0	0.00	6	0.28
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	29	5.83	10	5.16	1	0.01	16	0.63	2	0.03
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	6	10.94	3	10.82	1	0.09	0	0.00	2	0.03
Գեղարքունիք	6	0.13	0	0.00	3	0.08	3	0.05	9	0.514	1	0.04	0	0.00	1	0.004	7	0.47
Լոռի	7	0.03	0	0.00	3	0.01	4	0.02	13	6.494	2	6.00	4	0.47	6	0.02	1	0.004
Կոտայք	13	0.14	0	0.00	13	0.14	0	0.00	60	43.13	22	42.12	0	0.00	22	0.66	16	0.35
Շիրակ	2	0.04	0	0.00	1	0.03	1	0.01	6	2.92	2	2.75	0	0.00	4	0.17	0	0.00
Սյունիք	1	0.002	0	0.00	1	0.002	0	0.00	4	1.94	2	0.93	2	1.01	0	0.00	0	0.00
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	45	20.98	39	20.73	0	0.00	1	0.18	5	0.07
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	26	3.49	11	2.20	3	0.90	5	0.10	7	0.29
Ընդամենը	45	0.55	0	0.00	32	0.36	13	0.19	229	119.71	106	113.59	11	2.48	58	1.83	54	1.80

2016 թվականի հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 2 գործարք (0.70 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2016 թվականի հոկտեմբերին, 2015 թվականի հոկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 0.4 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 50.0 %-ով, իսկ մարզերում աճել է 5.7 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 3.6 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ աճել է 18.4 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 14.3 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 37.5 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի հոկտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	13	7.58	50.6	922.3	379.9	22	8.80	365.0	12000.0	3321.5
Ապարան						4	1.05	86.5	2727.3	640.0
Թային	1	15.26	275.0	275.0	275.0	10	14.01	93.6	5494.5	710.0
Ծաղկահովիտ						8	14.02	79.5	1000.0	406.0
Արարատի մարզ										
Արտաշատ						33	17.64	335.1	10833.3	2678.1
Մալիս	2	0.75	82.3	256.7	169.5	27	12.36	200.0	11904.8	3412.0
Վեդի	8	4.40	80.8	1833.3	2436.7	34	22.65	207.0	10795.1	1994.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						39	40.32	294.3	9090.0	1387.3
Բաղրամյան						16	25.45	90.6	2561.1	885.0
Վաղարշապատ	3	10.82	68.5	550.0	229.2	21	10.67	444.4	11764.7	1987.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	0.03	199.8	1875.0	510.0
Ճամբարակ								60.5	953.3	350.0
Մարտունի	1	0.04	17.8	17.8	17.8	1	0.02	51.1	2850.0	770.0
Սևան						6	8.73	52.2	2134.8	355.0
Վարդենիս						4	11.05	41.2	2575.1	375.0
Լոռու մարզ										
Ալավերդի						6	5.50	170.4	6424.2	545.0
Գուգարք						1	0.13	234.6	6065.9	810.0
Սպիտակ								250.0	5555.5	675.0
Ստեփանավան						5	4.12	90.6	1686.6	400.0
Տաշիր	2	6.00	552.0	552.0	552.0	42	34.05	45.3	1384.4	185.0
Կոտայքի մարզ										
Արուսյան	11	33.36	68.5	5833.3	2505.2	20	9.20	279.3	11942.7	4064.0
Եղվարդ	7	7.65	136.9	610.8	244.2	88	35.40	174.4	11971.8	2550.0
Հրազդան	4	1.12	956.4	1108.0	1041.4	11	5.50	130.5	10256.4	1015.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	2.62	143.4	143.4	143.4	11	6.54	252.0	1693.1	680.0
Ամասիա								40.9	261.0	140.0
Անի	1	0.13	294.7	294.7	294.7	8	5.00	110.6	546.9	462.3
Աշոցք								58.5	215.8	138.5
Արթիկ						12	10.92	79.4	1428.6	532.0
Սյունիքի մարզ										
Գորիս	1	0.43	1000.0	1000.0	1000.0	14	10.23	92.6	1023.2	750.0
Կապան						6	4.66	120.0	841.6	457.5
Մեղրի	1	0.50	460.0	460.0	460.0	2	0.26	193.0	3000.0	810.0
Սիսիան						11	6.43	46.3	1977.4	562.3
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	29	14.02	36.2	647.3	189.5	15	3.00	125.0	10000.0	1775.0
Վայք	10	6.71	34.5	631.2	95.9	4	1.64	58.8	1430.7	620.0
Տավուշի մարզ										
Բերդ								213.3	3783.8	690.0
Իջևան	11	2.20	144.3	1200.0	630.9	1	0.19	267.5	9454.5	1575.0
Նոյեմբերյան						5	3.14	46.7	7368.4	980.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի հոկտեմբերին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						9	11729.0	130.7	22200.0	2590.0
Ապարան						1	4150.0	124.1	609.6	389.3
Թալին						1	3500.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						4	10990.0	60.0	214.3	95.0
Արարատի մարզ										
Արտաշատ	3	4299.8	253.3	565.1	387.6	11	12770.8	173.9	7140.3	905.0
Մասիս	13	1983.8	1507.5	3901.5	3100.7	19	12033.2	187.5	25000.0	1206.5
Վեդի						7	9143.0	126.1	5000.0	664.3
Արմավիրի մարզ										
Արմավիր						13	15176.0	131.6	9090.9	1215.5
Բաղրամյան						1	1200.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						24	22655.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	3472.5	186.6	1084.3	684.0
Ճամբարակ								71.3	2286.2	147.0
Մարտունի						18	18624.9	119.3	5000.0	285.7
Սևան	1	40.5	1492.2	1492.2	1492.2			240.0	3110.4	347.0
Վարդենիս						2	3031.5	72.5	987.2	150.5
Լոռու մարզ										
Ալավերդի	6	179.7	3295.9	3337.0	3305.5	1	1054.6	114.3	1388.9	217.0
Գուգարք						2	1124.5	77.9	14083.3	1259.0
Սպիտակ								104.9	1348.3	198.3
Ստեփանավան								88.2	1666.7	176.0
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	18	4949.0	653.4	5434.3	3318.3	18	16585.2	264.5	35353.5	1950.0
Եղվարդ	1	800.0	2488.2	2488.2	2488.2	25	20472.0	173.6	27000.0	2855.0
Հրազդան	3	875.6	1430.3	2459.5	2108.3	8	5467.0	117.7	34848.5	1318.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	1206.1	554.4	554.4	554.4	3	1753.0	113.6	18750.0	333.0
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի	1	400.0	443.7	443.7	443.7			67.9	180.6	214.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	2	52.0	2875.0	3392.9	3133.9	1	24.0	111.8	5000.0	217.5
Սյունիքի մարզ										
Գորիս						1	1820.0	112.2	1700.0	366.3
Կապան						1	676.0	67.9	2638.9	360.0
Մեղրի						2	890.0	68.5	632.9	270.0
Սիսիան						10	5371.9	123.5	875.0	260.0
Վայոց ձորի մարզ										

Եղեգնածոր	1	1829.4	244.3	244.3	244.3	1	1300.0	96.7	7659.6	507.0
Վայք						1	2200.0	120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	127.3
Իջևան	5	1005.6	636.0	3000.0	1621.4	1	979.0	74.1	14423.1	510.0
Նոյեմբերյան						1	1040.0	125.0	1948.1	255.0

2016 թվականի հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 660 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.5 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 74.4 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2016 թվականի հոկտեմբերին, 2016 թվականի սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 7.8 %-ով, իսկ 2015 թվականի հոկտեմբերի համեմատ՝ 7.0 %-ով:

2016 թվականի հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 42 բնակարանի, 60 անհատական բնակելի տան, 351 հասարակական և 61 արտադրական նշանակության օբյեկտի, 137 հողի և 9 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, սերվիտուտի և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2016 թվականի հոկտեմբերին Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 2 վարձակալության գործարքի քանակը 2016 թվականի սեպտեմբերի համեմատ նվազել է 50.0 %-ով, իսկ 2015 թվականի հոկտեմբերի համեմատ՝ 71.4 %-ով:

2016 թվականի հոկտեմբերին հանրապետությունում վարձակալված 300.01 հա հողից 0.05 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 299.96 հա հողերից 294.17 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 1.19 հա արդյունաբերական օբյեկտների, 0.03 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Սյունիքի մարզում՝ 108.48 հա, որից 108.48 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2459 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 16.6 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016 թվականի սեպտեմբերի համեմատ, աճել է 59.1 %-ով, իսկ 2015 թվականի հոկտեմբերի համեմատ՝ 51.1 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (33.3 %), անհատական բնակելի տների (14.5 %), հասարակական նշանակության օբյեկտների (6.4 %) և հողերի (40.9 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 905 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016 թվականի սեպտեմբերի համեմատ աճել է 4.1 %-ով, իսկ 2015 թվականի հոկտեմբերի համեմատ՝ նվազել 3.2 %-ով:

2016 թվականի հոկտեմբերին հանրապետությունում գրավադրվել է 575.84 հա հող, որից 4.09 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 214.98 հա կամ 37.3 %-ը գյուղատնտեսական նշանակության, որից 1.31 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Լոռու մարզում՝ 354.27 հա, որից 19.35 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի հոկտեմբերին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 147 գործարք: 2016 թվականի հոկտեմբերին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի սեպտեմբերի համեմատ, նվազել է 6.4 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ մնացել է անփոփոխ:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 103 գործարք, որը 2016 թվականի սեպտեմբերի և 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 2.8 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի սեպտեմբերի համեմատ, նվազել է 13.7 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 7.3 %-ով :

2016 թվականի հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 1705 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2016 թվականի սեպտեմբերի համեմատ, նվազել է 13.6 %-ով, իսկ 2015 թվականի հոկտեմբերի համեմատ՝ 11.9 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 11.5 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Լոռու մարզում (17.9 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե